

արևմտական, մշակութային շփումների արդյունքում աստիճանաբար մուտք էր գործում նաև Հայաստան²: Հաւանաբար այս ժամանակաշրջանում է, որ հայ իրականության մեջ սկիզբ է առնում ծանոթությունը յունական ճարտասանական արուեստի հետ:

Յոյն նշանատր մարեմագիր Պլուտարքոսն իր «Զուգակշիռ» աշխատության մեջ հաղորդում է, որ հայոց Արարազի Բ արքան (Բ. ա. 55 - 34 թթ.) հեղինակել է ողբերգություններ, պարմական բնոյթի աշխատություններ, ճառեր³, որոնցից ոչինչ չի պահպանուել: Նույնիսկ արական թարգմանի առկայությունը Հայաստանում նույնպես կարելի է համարել իբրև յունական ճարտասանական արուեստին ծանօթ լինելու մասին անուղղակի վկայություն, քանի որ անարիկ թարգմանական արուեստն ամբողջությամբ ներծծում էր ճարտասանությամբ:

Միս արեղեկությունը գրում են բիզանդացի ակնաւոր ճարտասան Լիբանիոսի (314—մօր 393 թթ.) ճառերից մէկում: Նա, թուարկելով այն երկրները, որպէս իր մօր գալիս էին ճարտասանություն սովորելու, յիշարակում է նաև Հայաստանը. «Ես երեխաներ (իմա՝ աշակերտներ – Ն. ս. Ե.) ունեմ... Ղալթիայի քաղաքներում..., Հայաստանում...»⁴:

Այսքանով աւարտում են Հայաստանի այդ ժամանակաշրջանի ճարտասանության վերաբերելով մեզ հասած արեղեկությունները⁵: Այս ճարտասանական արուեստը դեռ հայկական չէր, սակայն հայոց գրերի գիտից յետոյ պէտք է նայաստեր ազգային ճարտասանական դպրոցի սրելծմանը:

Քրիստոնէությունը Հայաստանում պէտքական կրօն հռչակուելուց անմիջապէս յետոյ հրարապ անհրաժեշտություն առաջացաւ նոր կրօնի դրոյթները հնարատրին չափ հիմնաւորելու, ինչպէս նաև պայքարելու հեթանոսութեան, աղանդատրական ու հերծաւծողական շարժումների դէմ: Քրիստոնէութեան արմարատրումը երկարատրեւ եւ բարդ գործընթաց էր: Ժողովրդի լայն զանգուածները չէին կարող միանգամից ըմբռնել եւ ընդունել նոր կրօնը, նրանց գիտակցութեան մէջ դեռ արմարացած էին հեթանոսական հաւարալիքները⁶: Անհրաժեշտ էր պարտարել կրթեալ հոգեւորականների մի դաս, որը կգրաղուէր Հայաստանի քրիստոնէացմամբ, իսկ այդ քարոզչութեան կազմակերպման եւ նրանում յաջողութեան հասնելու համար անհրաժեշտ էր քաջարեղեակ լինել ժամանակի մարտր մշակոյթին: «Զի կարելի հասկանալ Աստուածաշունչն ու եկեղեցու հայրերին, պայքարել հեթանոսութեան ու հերեպիկոսութեան դէմ՝ առանց իմանալու ճարտասանություն, քերականություն, դիալեկտիկա, պարմություն եւ նոյնիսկ բնական գիտությունները», - կարծում է Օգոստինոսը⁷:

2 Տե՛ս «Հայ ժողովրդի պարմություն», հ. I, Եր., 1971, էջ 847-849:

3 Տե՛ս **Плутарх**, Крассе, XXXIII, в кн.: Сравнительные жизнеописания, в трех томах, т. II, Москва, 1963, էջ 263:

4 Մեջերվում է քար **Г. Л. Курбатов**, Риторика. – Вкн.: “Культура Византии (IV - первая половина VII в.)”, Москва, 1984, էջ 334:

5 Անարիկ եւ ուշ անարիկ մշակոյթի ականատր դեմերից հայազգի Տիրան Հայկազնին կամ Հային (լարինացում՝ Տիրանիոն) եւ Պարոյր Հայկազնին (278-367 թթ., յուն.՝ Պրոերեսիոս), որոնք իրենց ժամանակի խոշորագոյն ճարտասանի համբաւ էին վայելում, երբեմն փործում են ներկայացնել հայ հելլենիստական մշակոյթի համարերարում (տե՛ս, օրինակ, Ս. Ս. Արեւշարեան, Կ. Ա. Միրումեան, Հայոց փիլիսոփայութեան պարմություն, Եր., 2007, էջ 51-63): Սակայն, մեր կարծիքով, այդ ճիշտ չէ. թէեւ նրանք ազգութեամբ հայ էին, սակայն պարկանում էին յունահռոմէական մշակոյթին:

6 Տե՛ս Փաւրոս Բուզանդ, Պարմություն հայոց. «Մարեմագիրը հայոց», Ե դ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 294:

7 **Августин Блаженный**, Проповеди, Москва, 2005, стр.184.

օգտագործել նաև Նայաստրանում: Սրա վառ ապացույցն այն իրողությունն է, որ յունաբան դպրոցի կողմից հայ իրականության մեջ շրջանառության դրուած այս համակարգն իր հիմնական գծերով կրկնում էր բիզանդականին¹²:

Դրանով է պայմանաորորած այն հանգամանքը, որ յունաբան դպրոցի ներկայացուցիչները նախընտրում էին թարգմանել այսպես կոչուած «արտաքին գրեանք»՝ անտիկ եւ վաղ բիզանդական քերականական, ճարտասանական, փիլիսոփայական եւ նմանատիպ երկերը¹³:

Գիտական րեսության կիրառումը Նայաստրանում անհրաժեշտություն էր առաջացնում բազմաթիւ գիտական աշխատությունների թարգմանության եւ հայացման, իսկ այդ իր հերթին՝ լեզուական նոր որակների ստեղծման համար. «Գիտական - փիլիսոփայական գրականության թարգմանությունը պահանջում էր ստեղծել համապատասխան գիտական լեզու եւ կայուն եզրաբանություն, որից գործ էր դասական հայերէնը»¹⁴: Առաջ եկած եզրաբանական դժուարությունները յունաբան դպրոցի ներկայացուցիչները լուծում էին հիմնականում արհեստական ճանապարհով՝ եզրաստեղծական անհրաժեշտ նորամուծություններ կատարելով: Այդ ժամանակաշրջանում ստեղծուեց ճարտասանական եզրաբանության գերակշիռ մասը: Այսպիսով, յունաբան թարգմանությունները Նայաստրանում գիտական-րեսական մտքի սկզբնաորումը եւ զարգացումն ապահովելուց բացի կարեւոր դեր խաղացին հայերէնի գիտափիլիսոփայական եզրաբանության մշակման գործում: Ընդդէմ է, անհրաժեշտ եզրաբանության ստեղծման ընթացքում կատարուեցին նաև հայոց լեզուին անհարիր նորամուծություններ, սակայն դրանք աստիճանաբար դուրս մղուեցին:

Յունաբան դպրոցի լեզուական առանձնայատկություններին անդրադառնալիս անհրաժեշտ է կանգ առնել մի հետաքրքիր փաստի վրայ, որը կարեւոր դեր է խաղացել հայ ճարտասանական ստեղծագործությունների ոճական ձեւաորման գործում: Այդ յունաբան ոճի առկայությունն է հայ ինքնուրոյն ստեղծագործություններում. «Ոչ թարգմանական երկերում հանդիպող յունաբանությունները պէտք է դիտել որպէս յունաբան թարգմանությունների լեզուական ազդեցության արդիւնք, յատուկ ոճ, սկզբնական շրջանում՝ նորաձեւություն, իսկ յետագայում՝ նաև ընդունուած ոճական հնարք, երբ հեղինակն իր նախասիրության չափով ոճաորում էր շարադրանքը թարգմանությունների ընձեռած նոր բառերով, քերականական ձեւերով եւ շարահիստական դարձուածներով»¹⁵: Այսպիսով, կարելի է ասել, որ հայ ճարտասանությունն աստիճանաբար ձեւաորում, զարգացնում եւ մշակում էր իր լեզուական հնարքները, ոճերը:

Նայաստրանում գիտակրթական այս դասակարգման առաջին րեսությունը գրնում ենք Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրության» կոթողային երկում, որն, ինչպէս նաև նրա միւս աշխատությունները, յունաբանից հայերէն թարգմանուեց յունաբան դպրոցի

12 Նմմր. **Յ. Գ. Տամուրովա**, Школы и образование. - В кн.: "Культура Византии (IV - первая половина VII в.)", էջ 482-489 (այսուհետք՝ **Յ. Գ. Տամուրովա**, Школы и образование):

13 Տեն Յ. Անասեան, Նայական մատենագիտություն, Եր., 1959, էջ XII - XIII:

14 Ա. Ն. Մուրադեան, Յունաբան դպրոցը եւ նրա դերը հայերէնի քերականական րեսմիտարանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 57:

15 Գոհար Մուրադեան, «Գիրք պիտոյիցի» ոչ թարգմանական մասերի լեզուն եւ հայ հեղինակների յունաբանությունները, «Աշխատակ» (Նայագիտական պարբերագիրք), հ. Գ, Եր., 2000, էջ 100:

ներկայացուցիչների կողմից¹⁶։ Թեև այս աշխարհության մեջ համակարգում կերպով անդրադարձ չի կատարում մեր խնդրոյ առարկայ նիւթին, սակայն առկայ հարուկներ արեղեկութիւններից կարելի է որոշակի կարծիք կազմել հեղինակի՝ ճարտասանութեան վերաբերեալ ունեցած պարկերացումների մասին։ Դաւիթ Անյաղթն իր գիտակրթական աստիճանակարգում իմաստասիրութեանը հարկացնում է վերին արեղ՝ համարելով այն գիտութիւնների գիտութիւն, իսկ քերականական եւ ճարտասանական արուեստները նախորդելով նրան՝ դիպում են որպէս նրա գործիքները¹⁷։ Դաւիթ Անյաղթի այս երկում հայ իրականութեան մեջ առաջին անգամ հանդիպում ենք ճարտասանութեան արիստոքրեական բաժանմանը. «Ճարտասանականն սեռ գոյով յերիս բաժանի արեսակս. յարենականն, ի բաղխոհականն, ի կացրդականն»¹⁸։ Նեղինակը սկսում է այդ բաժանումների մեկնաբանումը, որն էլ մեզ յուշում է նրա արիստոքրեական ճարտասանական համակարգին ծանօթ լինելու իրողութիւնը. «Անուանեալ արեսակք ճարտասանականիդ ժամանակական ունին առ միմեանս զանազանութիւնս, վասն զի բաղխոհականն վասն ապառնոյ ժամանակի ունի զգոյութիւն. վասն զի յորժամ որ ունէր խորհրդակից գոյ՝ վասն հանդերձելոյն խորհի։ Իսկ արենականն վասն անցելոյ ժամանակին ունի զգոյութիւն. վասնզի ամենայն որ դարի՝ վասն այնոցիկ դարի, գորս գործեացն։ Իսկ կացրդականն յաղագս ներկային գոյանայ, վասն զի զաճումն առնութեան կայից բարեացն ունի յինքեան»¹⁹։ Ճարտասանութեան արիստոքրեական բաժանումն առկայ է նաեւ Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» ձեռնարկում. «Եւ նախ առաջին քան զամենայնն նմա ճառելի է, զի ճարտասանական բանիցն են որ ներքողականք են, եւ են որք արենականք, եւ են որ կաճառականք»²⁰ ինչպէս նաեւ յեղեղեղեղի հայ հեղինակների գործերում²¹։ Ճարտասանութեան այս բաժանումը հայ իրականութիւն մուտք գործեց Դաւիթ Անյաղթի վերոնշեալ երկով²²։

Գիտակրթական այս համակարգի մաս կազմող բոլոր երեք գիտութիւնները դասաւորուած էին աստիճանակարգութեան սկզբունքով, որը պայմանաւորուած էր նրանց միջեւ առկայ փոխարարբերութիւններով, որոնք իրենց արտացոլումն են գրել յունաբան դպրոցի գիտաբարգմանական գործունէութեան համապարկերում։

Քերականական արուեստի առաջին նպարակն էր սովորեցնել ուշադիր կարդալ գրքերը, իրացնել արտայայտման ձեւն ու բովանդակութիւնը եւ սեփական դատողութիւն ձեւաւորել կարդացած երկի մասին։ Այս արեսակէրից քերականութիւնն աւելի շուրջ մեկնողական-բացատրական բնոյթ ունէր, իսկ ճարտասանութիւնը՝ սրեղծագործական եւ կարարողական։

16 Տե՛ս Յակոբ Մանուղեան, Երկեր, հ. Է, Եր., 2010, էջ 61-63։

17 Տե՛ս Դաւիթ Անյաղթ, Սահմանք եւ արամասիրութեան, «Մարտնագիրք հայոց», Զ դ., Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 175 – 177 (հետագայում՝ Դաւիթ Անյաղթ, Սահմանք)։

18 Անդ, էջ 192, հմմտ. **Аристотель**, Риторика, Санкт - Петербург, 2000, էջ 12-13 (հետագայում՝ **Аристотель**, Риторика)։

19 Դաւիթ Անյաղթ, Սահմանք, էջ 192 – 193։

20 Թեոն Ալեքսանդրացի, էջ 175։

21 «Գիրք Սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի՝ հայոց իմաստասիրի եւ լուծումն արեան Առաքելի եռամեծ վարդապետի», Մարտնագիրք, 1797, էջ 78։

22 Նայ մարտնագրութեան մեջ չկայ եւ ոչ մի հետք Արիստոքրեի «Ճարտասանութիւն» երկի հայերէն թարգմանութեան, ուստիւ այն չէր կարող լինել վերոբերեալ բանաձեւի անմիջական աղբիւրը. այդ բաժանումը չունի նաեւ «Գիրք պիտոյիցը»։

Քերականության և ճարտասանական արունսրի կապը շար սերպ է. «Քերականության հարցերը դիդակտիկ - ճարտասանական լեզուաբանության մէջ անխուսափելիորեն արծարծում էին մայրենի և օտար լեզուների ուսուցման, այլև ճարտասանական հմտությունների մշակման, իսկ օնոմատիպական լեզուաբանության մէջ՝ իմացաբանական և արամաբանական հերազօտությունների հեր կապում»²³: Ահա այդ պարզաբանում էր, որ յունարան դպրոցի ներկայացուցիչներն առաջին հերթին ձեռնամուխ եղան ալեքսանդրացի ականաւոր քերական Դիոնիսիոս Թրակացու (Ք. ա. Բ դ.) «Քերականական արունսրի» թարգմանությունը, որը լայնօրէն օգտագործում էր բիզանդական քերականագիտական դպրոցներում: Այս աշխատությունը մեծ փարածում գտաւ Նայաստանում և դարձաւ միջնադարեան հայկական քերականագիտության հիմքը²⁴:

Ճարտասանական արունսրի և դիդակտիկայի²⁵ յարաբերությունները նայնպէս սերպ են: Այդ մասին արդէն իսկ խօսում է Արիստոտելին իր «Ճարտասանություն» աշխատության սկզբում՝ նշելով, որ այս երկու գիտությունները յաճախ զանազան խնդիրներին անդրադառնալիս աւելի սերպ են համագործակցում իրար հետ, քան միմեկը²⁶: Ճարտասանությունը չէր սահմանափակում պերճախօսության շրջանակներով, այլ բաւական առաւորէն ուսումնասիրում, պարզաբանում և շարադրում էր քաղաքական, կրօնական, փիլիսոփայական, բանասիրական և այլ փեսական հիմնահարցերի մի ողջ շարք:

Դեռեւս հին ժամանակներից մեզ են հասել ճարտասանական արունսրի ուսուցման բազմաթիւ ձեռնարկներ՝ Արիստոտելի, Յիցերոնի, Դիոնիսիոս Նալիկառնացու (Ք. ա. Ա դ.), Թեոն Ալեքսանդրացու (Ա դ.), Ներմոգենէս Տարսոնացու (Բ – Գ դդ.), Ափթոնիոսի (Գ – Դ դդ.) աշխատությունները և այլն:

Ճարտասանության ուսուցման համար Բիզանդիայում հիմնականում օգտագործում էին Դիոնիսիոս Նալիկառնացու և Ներմոգենէս Տարսոնացու միեւնոյն «Ճարտասանական արունսր» խորագիրն ունեցող ձեռնարկները: Ճարտասանություն ուսանելու համար, բացի վերոնշեալ ձեռնարկներից, Բիզանդիայում օգտագործում էին նաեւ Ափթոնիոսի «Գիրք պիպոյից» («Chreia Aftonianana» կամ «Ars rhetorica») ժողովածուն, որը ներկայացնում էր ճարտասանության փեսության և գործնական աշխատանքների միավորում: Այս աշխատության փեսական մասը գրում էր Ներմոգենէսի ձեռնարկի նմանողութեամբ, իսկ գործնական մասի օրինակները վերցրում էին յունաբիզանդական գրականությունից, Աստուածաշնչից և այլն: Ափթոնիոսի ձեռնարկն աստիճանաբար մեծ փարածում է գտնում և դառնում բիզանդական դպրոցներում ամենագործածականը²⁷:

23 Գ. Ջահուկեան, Լեզուաբանության պարմություն, հ. 1, Եր., 1960, էջ 6-7:

24 Տէն **Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, ինչպէս նաեւ Ն. Ադոնց, Երկեր, հ. Գ, Եր., 2008:

25 Անպիկ դիդակտիկական ոչ թէ իմաստասիրություն է, այլ գրոյց կամ վեճ վարելու արունսր: Այն իսկապէս քերականության (սելու և հասկանալու) և ճարտասանության (սեփական միպրք կարգադրելու և արարայարելու) միաւորում է: Նոր, մեզ համար աւելի սովորական իմաստը «դիդակտիկա» բառը ձեռք է բերում փիլիսոփաների, յարկապէս՝ Պլատոնի շնորհիւ այն պարզաբանով, որ գրոյցը կամ վեճը գործիք է դառնում փիլիսոփայական զաղափարների վերլուծության կամ աւելի յարակ ձեւատրման համար, փն «Новейший философский словарь», Минск, 2003, էջ 318 – 319:

26 Տէն **Аристотель**, Риторика, էջ 5-7:

27 Տէն **З. Г. Самодурова**, Школы и образование, էջ 485-486:

Բնական է, որ, ինչպես քերականության ձեռնարկի պարագային, նույնպես և ճարտասանության դեպքում, յունարան դպրոցի ներկայացուցիչների ընկերությունն ընկնում է Բիզանդիայում ամենալայն տարածում գտած ճարտասանության դասագրքի՝ Ափրոնիոսի «Գիրք պիպոյից» աշխատության վրայ²⁸։ Մեզ հասած Ափրոնիոսի յունարեն բնագիրը և հայերեն թարգմանությունն ունեն աչքի զարնող փոփոխություններ։ Նայելեն բնագրում առկա են բազմաթիվ ոչ թարգմանական հարուստներ, որոնք թոյլ են տալիս վարանքներ անդրադառնալ, որ «Գիրք պիպոյիցը» բիզանդական դասագրքի հիմքի վրայ ստեղծված հայ ինքնուրույն ստեղծագործություն է. «Փոխառելով թեմաներն Ափրոնիոսից՝ մեր հեղինակը աշխատել է որչափ հնարաւոր է լինել ինքնուրույն՝ մշակել այդ թեմաներն իր բառերով, եթե նոյնիսկ նա անխուսափելիորեն կրկնում է Ափրոնիոսի որոշ մտքեր և փոխառություններ, սակայն երբեք ոչ մի դարձածք, բացի խորագրից, չի թարգմանել բառացի»²⁹։ Այսպիսով, պարսկական չէ նաև այն երևույթը, որ այս գիրքը դարեր շարունակ հայ իրականության մեջ առանդաբար վերագրվել է Մովսես Խորենացու գրչին³⁰։

«Գիրք պիպոյիցից» բացի հայ իրականության մեջ օգտագործվել է նաև յոյն ճարտասան Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթությանց» («*Progygnasmata*») ձեռնարկը, որի թարգմանությունը հասանալի է 480-ական թուականներին³¹։ Թեոնի աշխատությունն, ի փոփոխություն «Գիրք պիպոյիցը», որը մեզանում օգտագործվել է ընդհուպ մինչև ուշ միջնադարի առաջին, լայն տարածում չի գտել³²։ Այս երկու ձեռնարկների թարգմանության շնորհիվ հայկական ճարտասանությունը ձեռք բերեց իր փեսությունը։

Նայ իրականության մեջ ճարտասանության տարածումը և յարգի լինելու փաստի մասին է վկայում զանազան անձանց կապակցությամբ «բերթող», «ճարտասան», «հեղինակ» բնորոշումների բազմիցս օգտագործումը։ Եւ, հիշատակելով, այդ ժամանակաշրջանի կրօնական, մշակութային, հասարակական, քաղաքական կեանքում, որը լի էր տարաբնույթ բազմաթիվ վեճերով, հակասություններով, կարևոր դեր էր վերապահում ճարտասաններին, իմաստասերներին. «Քերթողները և իմաստասերներն են եղել, ինչպես յայտնի է, այդ ժամանակույն հեղինակաւոր գիրականները։ Վեցերորդ դարում կրօնական վեճերի ժամանակ սրանք են գլխաւորապէս հիմնաւորել ու պարճառաբանել վիճելի հարցերը և հանդէս եկել եկեղեցական ժողովներում՝ հակառակորդների դէմ»³³։

28 Ըստ Մեն Արեւշատանի՝ «Գիրք պիպոյիցի» թարգմանությունը պէտք է կատարված լինել յունարան դպրոցի առաջին շրջափուլի (450-ական թթ. կեսից մինչև 480-ական թթ. սկիզբ) սկզբներին, տե՛ս **Ս. Ս. Արևշատյան**, *Формирование философской науки в древней Армении (V – VI вв.)*, Ереван, 1973, էջ 186 (հեղաշարժ՝ **Ս. Ս. Արևշատյան**)։

29 «Книга хрий», стр.16։

30 Այս խնդրին մանրամասն անդրադարձել է Գոհար Մուրադեանը «Գիրք պիպոյիցի» առաջաբանում, տե՛ս, էջ 14 – 24։

31 Տե՛ս **Ս. Ս. Արևշատյան**, էջ 187։

32 Տե՛ս Թեոն Ալեքսանդրացի, էջ 9։ Նայ իրականության մեջ այս երկու ձեռնարկները, և յարկապես՝ «Գիրք պիպոյիցի» այնքան էլ չեն գործածական, որ միայն ժԸ դարում փորձ արվեց արեղծել նորերը, որոնք հիմնականում երազական ճարտասանական դասագրքերի փոխադրումն էին հայերենի. տե՛ս **Խաչատուր Էրզրումցի**, *Ճարտասանություն*, Վենետիկ, 1713, **Եղիազար Մուրադեան**, *Նոր ճաշակ դպրության կամ համառոտ ճարտասանություն*, Երուսաղեմ, 1868։

33 Յակոբ Մանանդեան, *Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928, էջ 4։

Թարգմանական փարաբոլոյթ սրեղծագործություններն իրենց բովանդակային, գաղափարական առումներով հսկայական դերակատարություն ունեցան հայկական ճարտասանական արուեստի ձևաորման գործում. «Ճարտասանական դասընթացների արդյունքում ուսումնասիրուող բնագիրը համարեայ թէ անգիր էր արտոմ: Դրա հետեւանքներից մէկն այն էր, որ վերլուծողը եւ ունկնդրողը երբեմն կարող էին սերտուող հեղինակի ազդեցությունը կրել նաեւ սեփական սրեղծագործութեան, մինչեւ իսկ սեփական ոճի վրայ»³⁴: Այս հանգամանքի վառ ապացոյցն այն ակնյայտ ճարտարահայրչական, կառուցումաբանական ընդհանրություններն են, որոնք կան հայ եւ յունական, ասորական եւ այլ գրականությունների միջեւ, որոնցից կարարուել են թարգմանություններ. «Պարամաշակոյթային արեսակերից թարգմանական եւ ինքնուրոյն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, բանի որ թէ՛ բովանդակութեան եւ թէ՛ ձևի առումով նրանք ներկայացնում են միասնական գրական իրողութեան հաւասարաբժէք կողմերը»³⁵:

Թարգմանական գրականությունից յարկապէս հայկական ճարտասանութեան եւ ընդհանրապէս հայոց մշակոյթի վրայ իր ունեցած հսկայական ազդեցութեամբ առանձնանում է Ասորւածաշունչը. «Նայ Ասորւածաշունչը սկզբնաորությունը եղաւ հայ գրականութեան, սկզբնաորությունը նոր թուականի մը, ուր հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով՝ գրիչ ի ձեռին իր փողը կուգայ գրաւել լուսաւորեալ մարդկութեան մէջ»³⁶:

Ասորւածաշունչ մարեանն իր ընդարձակ թեմայիկ եւ գաղափարական հնարաւորություններով անսպառելի հանք էր քրիստոնէական, այդ թում նաեւ հայկական ճարտասանական արուեստի համար³⁷: Այդ ժամանակաշրջանի ճարտասաններն իրենց սրեղծագործությունների համար նիւթ ընտրելիս կամ դրանք հիմնաւորելիս յաճախ էին դիմում Սուրբ Գրքին: Երբեմն Ասորւածաշնչի եւ ճարտասանական զանազան սրեղծագործությունների բնագրային փարբեր հարաւածների յարաբերություններն այնքան են ներանցական լինում, որ շարքէպետներում դժուար է որոշել՝ արդեօք համանմանութիւն է ակնարկում, թէ՛ հեղինակը գրել է առանց բառացի նոյնությունների: Բնագրային այդ յարաբերությունների ձևերն ու աստիճանները հեղինակից հեղինակ փարբեր են. Ասորւածաշունչը կարող է օգտագործուել մէրթ որպէս սկզբնաղբիւր (Մովսէս Խորենացու «Նայոց պարմություն»)՝³⁸, մէրթ բնագրային անհրաժեշտ փոփոխություններով (պահպանելով բնագրային բառային եւ իմաստային շրջանակները) դառնալ արուեստ սրեղծագործութեան բաղկացուցիչ մասերից մէկը (Եղիշէի «Վասն Վարդանայ եւ հայոց պարերագմին»)՝³⁹, ու մէրթ ազաւր շարադրմամբ նիւթ զանազան սրեղծագործությունների համար (Մամբրէ Վերծանողի «Վասն

34 Օ. Ս. Վարդապետան, Մեկնողական ընթերցանությունները եւ Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերէն մեկնությունները. «Բանբեր Երեսնի համալսարանի», 2001, թ. 3, էջ 117:

35 Լեւոն Տէր-Պետրոսեան, Նայ ինն թարգմանական գրականություն, Եր., 1984, էջ 6:

36 Նիկողայոս Ադոնց, Երկեր, հ. Բ, Եր., 2006, էջ 43:

37 Ասորւածաշունչ մարեանն ամփոփում է փարբեր սեռերի, ժանրերի, ոճերի գրումները, որոնք բանասիրական արեսանկնով վերցրած սեմաբանական պոետիկայի հիմնալի նմուշներ են. իհարկէ, այս նմուշների մէջ կան նաեւ մերձաւոր արեւելեան ճարտասանական արուեստի բազմաթիւ օրինակներ: Վերջին փարբերին Ասորւածաշնչի ուսումնասիրությունը պարզել է նաեւ հելլենիստական գրականութեան ազդեցութեան առկայությունը, որն զգալի է յարկապէս նորկարակարանեան փերսերում: Տէն **Девид Оун**, Библия и литература античности: греко-римский период, «Современные исследования Библии»: Екатеринбург, 1998, էջ 146 – 161:

38 Տէն Մովսէս Խորենացի, Պարմություն հայոց. «Մարենագիրք հայոց», Ե դ., էջ 1755 – 1770:

39 Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Նայոց պարերագմին. «Մարենագիրք հայոց», 2003, էջ 636 – 641:

յարութեան Ղազարու յատուր շաբաթի», «Ի Ծնունդն Փրկչին ասացեալ եւ ի Ծնունդ նորին ութ ատուրն»⁴⁰) եւ այլն: Երբեմն օգտագործման այս եղանակները կարող էին կիրառուել միևնույն սպեղծագործութեան մէջ: Սուրբ Գրքի լայնակի օգտագործումն անհրաժեշտութիւն էր, որովհետեւ կրուեալ ժամանակաշրջանի ճարտասանութիւնը մեծաւ մասամբ եկեղեցական - աստուածաբանական բովանդակութիւն եւ ուղղութիւն ունէր: Գարատասանութեան կողմից աստուածաշնչային նիւթի օգտագործման հետաքրքիր ապացոյցներից է այն իրողութիւնը, որ «Գիրք պիտոյիցի» հայկական տարբերակում օրինակների մի մասը վերցուած է Աստուածաշնչից⁴¹:

Նայ ճարտասանութեան ձեւաւորման գործում քիչ ազդեցութիւն չեն ունեցել Եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նիսացու եւ շատ ուրիշների Ե դարում թարգմանուած ճառերը⁴²:

Գարատասանական արուեստը նշանակալի ազդեցութիւն ունեցաւ հայ մատենագրութեան մէջ գրական զանազան տեսակների՝ ողբի⁴³, ներբողեանի⁴⁴, հակաճառութեան-ջապագովութեան, նամակի եւ այլ ժանրերի ձեւաւորման ու զարգացման գործում: Դա պայմանաւորուած էր կրուեալ գրական ժանրերի ճարտասանական արմատներ ունենալու հանգամանքով:

Նայ հին եւ միջնադարեան մատենագրութեան մէջ սովորական երևոյթ է ճարտասանական բնոյթի հարուածների առկայութիւնը գրական զանազան սպեղծագործութիւններում: Այսպէս, օրինակ, Ագաթանգեղոսի (Գրիգորի տեսիլքը, Նոյսիսիմէի եւ Տրդատի մեհմարտը) եւ Մովսէս Խորենացու պատմութիւններում (Տիգրան Մեծի ներբողը⁴⁵, Ողբը), Եղիշէի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի» (Նազկերտին ուղղուած պատրասխանը, Վարդանի, Յովսէփ Կաթողիկոսի, Ղեւոնդ Երեցի ճառերը⁴⁶) եւ այլ երկերում հանդիպում ենք ճարտասանական արուեստի հիմնալի նմուշներին:

40 Մամբրէ Վերծանող, ճառեր. «Մատենագիրք հայոց», Ե դ., էջ 1107 - 1120, 1130 - 1136:

41 «Գիրք պիտոյիցի» օրինակների աստուածաշնչեան թեմաներով գրուած լինելու հանգամանքի մասին առաջին անգամ նշել է Յովհաննէս Զօհրապեանը. տե՛ս «Սրբոյ Քերթովաօր մերոյ Մովսէսի Խորենացոյ Գիրք պիտոյիցի», աշխատասիրութեամբ Յ. Զօհրապեան, Վենետիկ, 1796:

42 Նայ ճարտասանութեան ձեւաւորման վրայ ունեցած ազդեցութեամբ Կիմ Մուրադեանը յարկապէս առանձնացնում է Ս. Գրիգոր Նազիանզացու գրչին պատկանող «Ս. Բարսեղ Կեսարացու Դամբանականը» եւ դրանով փորձում բացատրել Կորնիի «Վարք Մաշտոցի» երկի որոշ կառուցուածքային առանձնապատկերներ. տե՛ս Կ. Մուրադեան, Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրութեան մէջ, Եր., 1983, էջ 114-123:

43 Ողբի ժանրի հայ իրականութեան մէջ ձեւաւորման ընթացքում հսկայական ազդեցութիւն է ունեցել Աստուածաշնչի գրքերից մէկը՝ Երեմիայի ողբը, տե՛ս Պ. Մ. Խաչատրեան, Նայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ - ԺԷ դդ.), Եր., 1969, էջ 16-17:

44 Նայ հին մատենագրութեան մէջ ներբողի սկզբնաւորման համար նշանակալի է «Գիրք պիտոյիցի» եւ Թեոփի ձեռնարկի ազդեցութիւնը, տե՛ս Արշալոյս Ղազինեան, Ներբողը հայ հին գրականութեան մէջ. «Նայ միջնադարեան գրականութեան ժանրեր», Եր., 1984, էջ 129-132:

45 Մանուկ Աբեղեանը Մովսէս Խորենացու «Նայոց պատմութեան» մէջ Տիգրան Մեծի վերաբերեալ ներբողում փորձում է տեսնել «Գիրք պիտոյիցի» ցուցումների կիրառութիւնը, տե՛ս Մանուկ Աբեղեան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1968, էջ 301-305:

46 Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Նայոց պատերազմի» երկում առկայ ճարտասանական հարուածներին յամառոր անդրադարձումներ է կատարել Մանուկ Աբեղեանը. տե՛ս անդ, էջ 335-338: